# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, h. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am
N Ե- 01/93

«22» Մարտի 2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Պ-ն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի մարտի 22-ի թիվ 6-Ա, 7-Ա, 8-Ն, և 9-Ա որոշումները:

Առդիր՝ 5 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Զորագետ համայնք, հասցե հ. 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«22» Մարտի 2019 թվականի N 6-Ա

## ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22--Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Զորագետ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Զորագետ համայնքի ավագանու 2019թվականի մարտի 22-ի նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Զորագետ համայնքի ղեկավարի վարձատրության չափը համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Զորագետ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 22-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
3. .Զորագետ համայնքի վարչական սահմանում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թ. մարտի 22
հ. Զորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե՝ հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 22» Մարտի 2019 թվականի N 7-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1 8-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ, հոդվածի 1-ին մասով Ձորագետ համայնքի ավագանին

Ո ր ո շ ու մ է.

1.Հաստատել Ձորագետ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Ձորաագետ համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 14-Ա որոշումը:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԲՈԶԱՐՅԱՆ

ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. մարտի 22
հ. Ձորագետ

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի
Զորագետ համայնքի ավագանու
2019թվականի մարտի 22-ի N 7-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 4:

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) |
|---|---|---|---|
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | |
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 150000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | |
| 2 | Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար | 1 | 118000 |
| 3 | Համայնքապետարանի առաջատար մասնագետ | 1 | 116000 |
| 4 | Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ | 1 | 110000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 4 | 494000 |

ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե` h. 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ու Մ

«22» Մարտի 2019թվականի N 8-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 22-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2019թվականի բյուջեն հաստատելու մասին» N 22-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ համաձայն կից 1-5 հատվածների:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թ. մարտի 22
ք. Ձորագետ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
**Ձորագետ համայնք, հասցե՝ հ. 1փ. 41, հեռախոս 093-33-88-09**
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

« 22 » Մարտի 2019 թվականի N 9-Ա

### ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 1997թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշումը . Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.07.2010 թվականի թիվ 186-Ն հարամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով, հաշվի առնելով սեփականության իրավունքի գրանցման թիվ 1739636 վկայականը, հիմք ընդունելով ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված 2019թվականի փետրվարի 15-ի N ԱՏ -13/02/2019-34-0054 տեղեկանքը համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը՝ որ կադաստրային քարտեզի և տեղեկագրի համաձայն 06-065-0011-0002 ծածկագրից առանձնացված 0.104 հա բնակավայրերի բնակելի տան կառուցապատման և սպասարկման հողամասը սխալմամբ համայնքային սեփականության փոխարեն հաշվառվել է մշտական օգտագործման իրավունքով անհայտ և որևէ անձի նկատմամբ գույքային իրավունքի գրանցում չի իրականացված, հողամասում առկա է համայնքային սեփականության անշարժ գույք. Ձորագետ համայնքի ավագանին

Ո ր ո շ ու մ է.

1. Ճանաչել Ձորագետ համայնքի սեփականության իրավունքը 06-065-0011-0002 ծածկագրով, 0.104 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման և հողամասի նկատմամբ որպես համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տան պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համաձայն սեփականության իրավունքի գրանցման թիվ 1739636 վկայականի::
2. Համայնքի ղեկավար Ա. Գրիգորյանին՝ դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, 06-065-0011-0002 ծածկագրով, 0.104 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Ձորագետ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019թ. մարտի 22
հ. Ձորագետ